Պարոն/Տիկին Գ. Սարգսյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա.Սաֆարյան _____

«24» 06 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Ռիմա Գրիգորյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Վիեննա, Ավստրիա, 2024 թվականի հունիսի 20:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի կապի համար պատասխանատու աշխատակիցների նիստին՝ հանձնաժողովի և ասոցիացիայի միջև համագործակցությունն ապահովելու համար:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Նիստի ընթացքում ներկայացվել են Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի 2024-2025 թվականի աշխատանքային պլանի հիմնական տարրերը, ասոցիացիայի գործունեության հիմնական ուղղությունները և հետագա քայլերը: Տրվել է տեղեկատվություն նաև անդամակցության վճարի չափի փոփոխման վերաբերյալ (2025 թվականից ERRA անդամակցության վճարը կդառնա 4500 եվրո նախկին 3500 եվրոյի փոխարեն):

Մասնակից երկրների կապի համար պատասխանատու ներկայացուցիչները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով իրենց կարգավորող մարմինների գործունեության վերջին զարգացումները և Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի հետ միջազգային համագործակցությունը շարունակելու կարճաժամկետ և երկարաժամկետ հնարավորությունները:

7.Հանդիպումները, ելույթները՝ Նիստի ընթացքում ներկայացվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վերջին զարգացումները կապված էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, Էներգետիկայի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու, 30 ՄՎտ-ից ավելի հզորությամբ խոշոր արտադրողների, էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներին էլեկտրական էներգիայի հաղորդման, բաշխման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայում հաշվեկշռման ծառայության մատուցման սակագների վերանայման և այլ հարցերի հետ: Քննարկվել են հանձնաժողովի հետաքրքրությունների շրջանակում գտնվող 5 հիմնական թեմաները (1. էլեկտրաէներգետիկական շուկայի մոնիթորինգ, 2. շուկայի միացում, 3. սակագներ. բաշխիչ համակարգի ծառայությունների գնագոյացման մեխանիզմներ՝ հաստատված վճարների կիրառմամբ, 4. վերականգնվող էներգետիկայի զարգացմանը զուգահեռ համապատասխան բարեփոխումների իրականացում, 5. էլեկտրական ավտոմոբիլների լիցքավորում, դրա կարգավորում) և ապագայում նկատվող 3 հիմնական մարտահրավերները (1. Ֆինանսական և ինստիտուցիոնա անկախություն, 2. ոչ բավարար աշխատակիցների առկայություն, 3. տեղակայման վայրի փոփոխություն), ներկայացվել են հաղորդակցության իրականացման հիմնական ուղիներն ու մեթոդները: Քննարկվել է առաջիկա և հաջորդ երկու-երեք տարիների ընթացքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նեկայացուցիչների հնարավոր ֆիզիկական մասնակցության հարցը Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի նախատեսվող հանդիպումներին, նիստերին ու սեմինարներին:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ ERRA-ի և անդամ երկրների միջև համագործակցության արդյունավետությունը պահպանելու, փորձի փոխանակում իրականացնելու, այդ երկրներում տեղի ունեցող զարգացումներին

պարբերաբար ծանոթանալու նպատակով ձեռք է բերվել համաձայնություն պահպանել կապի համար պատասխանատու մասնակիցների հանդիպումների շարունակականությունը յուրաքանչյուր տարի: Ներկայացվել են ERRA-ի Տարեկան կոնֆերանսի (2025թ. գարուն, Մասկատ, Օման), էներգիայի փոխակերպման (նոյեմբերի 7-8, Ստամբուլ), էլեկտրաէներգիայի շուկաների և տնտեսական կարգավորման (նոյեմբերի 7-8, Ստամբուլ), գազի շուկաների և տնտեսական կարգավորման (հոկտեմբերի 28-29, Տիրանա) և հաճախորդների պաշտպանության կոմիտեների (հոկտեմբերի 16-17, Աթենք) հաջորդ նիստերի անցկացման օրերը և վայրերը: Նշվել է նաև նախագահների հանդիպման անցկացման ամիսը և վայրը՝ սույն թվականի հոկտեմբերի 28, Տիրանա:

Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի կապի համար պատասխանատու աշխատակիցների նիստը հնարավորություն է տվել ավելի լավ հասկանալ էներգետիկ ճգնաժամի իրավիճակում անդամ մյուս երկրներում առաջ եկած խնդիրները, դրանց հետևանքները և հնարավոր լուծումները, ստեղծված պայմաններում անդամ երկրների կարգավորող մարմինների գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև էլ ավելի է ամրապնդել ERRA-ի և հանձնաժողովի, հանձնաժողովի և ERRA-ի անդամ երկրների միջև համագործակցությունը:

Գործուղվող ---------- 24 հունիսի 2024թ. ---------- ***Ռ. Գրիգորյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 447-ԳՔ, 22.05.2024թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ՝ **Ռիմա Գրիգորյանին,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ ք. **Վիեննա / Ավստրիա /**

5. Գործուղման ժամկետները՝ **19.06.2024-21.06.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Ռիմա Գրիգորյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	13,688	13.688
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	273,764	273.764
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	111	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	46,223	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	92,445	92.445
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	59,261	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	177,783	177.783
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		557,680	557.680

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

25.06.2024թ.